ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԽՈՒՄԲ

№ 2621/1529 22.04.2015թվ.

ՀՀ Ոստիկանության պետ,
գեներալ-լեյտենանտ
պարոն՝ Վ. Գասպարյանին

Հարգելի պարոն Գասպարյան,

Սույն թվականի ապրիլի 18-ին ՀՀ ոստիկանության Դիտորդական խումբը այցելություն էր կատարել ՀՀ ոստիկանության Լոռու ՄՎ Տարոնի բաժնի ՁՊՎ և արձանագրել էր թերություններ և խախտումներ:

Թերություններ՝

1. Ընդհանուր ՁՊՎ-ում բացակայում էր լոգանքի համար նախատեսված տաք ջուրը:
2. Անկողնային պարագաները գտնվում էին արյունոտ և կեղտոտ վիճակում: */կից ներկայացվում է փաստը հաստատող լուսանկար – 1/*

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ
ՄՏՈՒ № 1817
24 04 2015 թ.

Խախտումներ՝

1. Ձերբակալված և կալանավորված անձանց գտնվելու վայրի մասին մերձավոր ազգականներին հեռախոսազանգով կատարվող իրազեկումը կատարվում է բացթողումներով: */կից ներկայացվում է փաստը հաստատող լուսանկար –2/*
2. Դիտորդական խմբի ուսումնասիրությունները ևս մեկ անգամ ապացուցեց, որ անձին փաստացի ազատությունից զրկում են, հաջորդիվ նոր կատարվում է ՀՀ օրենսդրությամբ նախատեսված պահանջները: Օրինակ՝

ՀՀ Ոստիկանության Քարտուղարություն
Մտից թիվ 2624
24 04 2015 թ.

ՀՀ ք.Երևան 0009, Սարմենի 60 Հեռ./ֆաքս: (+374 10) 52 81 87

Վարդան Գառնիկի Մալաքյանի ձերբակալման արձանագրությունը կազմվել է ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության ՀԿԳ ավագ քննիչ՝ Հ. Հովսեփյանի կողմից 18.03.2015թ-ին ժամը 11.37-ից մինչ ժամը 12.05 ընկած ժամանակահատվածում: Սակայն ըստ <<ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման>> գրանցամատյանի՝ Վ. Մալաքյանը ՁՊՎ է ընդունվել նույն օրը, ժամը 11.57-ին: Այսինքն՝ ձերբակալումը ավարտելուց 8 րոպե ավելի շուտ: Ավելացնենք նաև, որ անձի ձերբակալման արձանագրությունը կազմված է թերություններով: Նշված չէ, թե անձը երբ է ծանոթացել ձերբակալման արձանագրությանը:

Հարկ ենք համարում ևս մեկ հանգամանք ներկայացնել, կապված ձևական կատարվող և գրանցվող գրագրության հետ: Վ. Մալաքյանի ազատ արձակման գրությունը, կից՝ որոշումով Տարոնի բաժնում գրանցված է 20.03.2015թ-ի թիվ 1002 հերթական համարի տակ, սակայն 20.03.2015թ-ի թիվ 1155 շատ ավելի ուշ գրանցված ծանուցագրով՝ վարույթով զբաղվող քննիչը իրազեկվել է ձերբակալվածի առավելագույն ժամկետը լրանալու վերաբերյալ: */կից ներկայացվում է փաստը հաստատող լուսանկարներ–3,4,5,6/*

3. Մաթևոս Գրիգորի Սարոյանը 16.04.2015թ-ին ժամը 08.30-ին բերման է ենթարկվել ՀՀ ոստիկանության Լոռու ՄՎ Տարոնի բաժին: 16.04.2015թ-ին ժամը 08.50-ից մինչ 09.05 ընկած ժամանակահատվածում կազմվել է Մ. Սարոյանի ձերբակալման արձանագրությունը, սակայն ըստ <<ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման>> գրանցամատյանի՝ անձը ՁՊՎ է ընդունվել նույն օրը, ժամը 08.50-ին՝ 15 րոպե ավելի շուտ քան ձերբակալվել է: Այս ամենի վերաբերյալ Դիտորդական խումբը ցանկանում է կատարել իր դիտարկումը, առ այն, որ <<ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման>> գրանցամատյանում գրանցված 08.50 ժամը ոչ համընկնում է անձին փաստացի ազատությունից զրկելու ժամի հետ, և ոչ էլ ձերբակալելուց հետո ՁՊՎ ընդունելու ժամի հետ: Ուստի խնդրում ենք տվյալ հիմնախնդիրը չկապել ձերբակալման ժամի հետ:

Միաժամանակ հարկ ենք համարում տեղեկացնել, որ տվյալ անձը, ով գրանցված էր Մ. Սարոյանի անվամբ և գտնվում էր ՀՀ ոստիկանության Լոռու ՄՎ Տարոնի բաժնի ՁՊՎ-ում ոչ անձն էր պարզված և ոչ էլ ուներ անձը հաստատող որևէ փաստաթուղթ, որը հաստատված է ձերբակալման արձանագրության մեջ առկա գրառումով, որպես հիմք անձը հաստատող փաստաթուղթը ՁՊՎ-ից բացակայելու և ՁՊՎ-ի պատասխանատու ոստիկանի բանավոր խոսքով: */կից ներկայացվում է փաստը հաստատող լուսանկարներ–7,8/*

Այսպիսով՝ խնդրում ենք ուսումնասիրել ներկայացրած փաստերը և տալ մեկնաբանություն :

Հարգանքով՝

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական Դիտորդական խմբի նախագահ՝ Հ. Սահակյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ

375025, ք. Երևան, Նալբանդյան 130 հեռ. 59-65-94

N 2/2-1-1484 << 11 >> 05 2015թ.

Ձեր 22.04.2015թ. թիվ 2621/1529 գր.

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալվածներին պահելու վայրերում հասարակական դիտորդների խմբի նախագահ տիկին Հասմիկ Սահակյանին

Հարգելի տիկին Սահակյան

Հայտնվում է, որ դիտորդների խմբի կողմից 2015թ. ապրիլի 18-ին ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Տարոնի բաժնի ձերբակալվածներին պահելու վայր կատարած այցելության ընթացքում արձանագրված թերությունները և խախտումներն ուսումնասիրվել են ՀՀ ոստիկանության շտաբում և Լոռու մարզային վարչությունում:

ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն ներկայացվում են ներքոշարադրյալ մեկնաբանությունները:

Թերություններ.

1. Ոստիկանության Տարոնի բաժնի ՁՊՎ-ի լոգարանը ապահովված է էլեկտրական ջրատաքացուցիչով, որը աշխատում է անխափան և անհրաժեշտության դեպքում ձերբակալվածները ապահովվում են տաք ջրով: Բացի այդ, ՁՊՎ-ում տեղադրված է ջեռուցման երկխցիկանի կաթսա, որի միջոցով ևս հնարավոր է լոգարանը ապահովել տաք ջրով:
2. ՁՊՎ-ում պահվող անձինք չլինելու ժամանակ անկողնային պարագաները լինում են առանց սպիտակեղենի: Հնարավոր է երկար ժամանակ օգտագործման հետևանքով առաջանային հետքեր: Ներկայումս բարձերը փոխարինվել են նորերով:

Խախտումներ.

1. Ձերբակալված Կ. Մխիթարյանը ՁՊՎ ընդունվելիս իր գտնվելու վայրի մասին իր կողմից ընտրած անձին տեղյակ պահելու համար հեռախոսահամար տրամադրելուց հրաժարվել է՝ հայտնելով, որ հարազատները տեղյակ են իր գտնվելու վայրի մասին, ինչի վերաբերյալ ՁՊՎ-ի ոստիկանը տեղեկանքում նշել է՝ <<հարազատները տեղյակ են>>, որն իր ստորագրությամբ հաստատել է նաև ձերբակալվածը՝ նշելով ամսաթիվը և ժամը: Ինչ վերաբերվում է ՁՊՎ ոստիկանի կողմից տեղեկանքում ամսաթիվը և ժամը չնշելուն, ապա այն վրիպում է, որով ձերբակալվածի իրավունքները չեն խախտվել:
2. Դիտորդների խմբի կողմից նշված այն հանգամանքը, որ անձին փաստացի ազատությունից զրկում են, հաջորդիվ նոր կատարվում է ՀՀ օրենսդրությամբ նախատեսված պահանջները, ինքնին խոսում է այն մասին, որ տվյալ դեպքում գործողություններն օրինաչափ են և չեն հակասում գործող օրենսդրության պահանջներին:

Վ.Մալաքյանը ձերբակալվել է ՀՀ ՔԿ Լոռու մարզային քննչական վարչության քննիչի կողմից 18.03.2015թ.: Ձերբակալման արձանագրությունը կազմվել է նշված օրը ժամը 11.37-ից մինչև 12.05-ն ընկած ժամանակահատվածում: <<ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման>> գրանցամատյանի 7-րդ սյունակում պահանջվում է լրացնել **ձերբակալման ամսաթիվը և ժամանակը** (այլ ոչ թե ՁՊՎ ընդունվելու ժամանակը), ինչը պատշաճ կերպով կատարվել է: Կոնկրետ Վ.Մալաքյանի դեպքում նշված գրանցամատյանում ձերբակալման ժամը նշվել է 11.37-ը, այլ ոչ թե 11.57-ը (ինչը հստակ երևում է Ձեր իսկ կողմից տրամադրված թիվ 3 լուսանկարում), քանի որ համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 128-րդ հոդվածի՝ անձի ձերբակալումն արգելանքի վերցնելն է, նրան հետաքննության մարմին կամ վարույթն իրականացնող մարմին բերելը, համապատասխան արձանագրություն կազմելը...: Տվյալ դեպքում Վ.Մալաքյանը ձերբակալվել է 18.03.2015թ. ժամը 11.37-ին, ինչը նշվել է գրանցամատյանում, իսկ ՁՊՎ ընդունվելու ժամի վերաբերյալ նշում կատարելը ներքին կանոնակարգով նախատեսված չէ:

Բացի այդ, դիտորդների խումբը չի տիրապետել փաստաթղթերի մուտքի և ելքի գրանցման կարգին, քանի որ ձերբակալված Վ.Մալաքյանին արգելանքից ազատելու մասին որոշումը ստացվել է ՀՀ ՔԿ ԼՄ քննչական վարչությունից 20.03.2015թ. ու գրանցվել է **<<Մտից փաստաթղթերի հաշվառման մատյանի>>** թիվ 1002 համարի տակ, իսկ նույն օրը, ավելի շուտ, քննչական վարչություն է ուղարկվել Վ.Մալաքյանի արգելանքի տակ պահելու առավելագույն ժամկետը լրանալու վերաբերյալ ծանուցագիրը, որը գրանցվել է **<<Ելից փաստաթղթերի հաշվառման մատյանի>>** թիվ 1155 համարի տակ, այսինքն որևէ խախտում թույլ չի տրվել և նշված մատյանների թվերը միմյանց հետ կապ չունեն: Ինչ վերաբերվում է Վ.Մալաքյանին ձերբակալման արձանագրությանը չծանոթացնելուն, ապա տվյալ դեպքում այն վարույթն իրականացնող մարմնի գործառույթն է:

3. Մ.Սարոյանը ոստիկանության Տարոնի բաժին բերման է ենթարկվել 16.04.2015թ. ժամը 08.30-ին, ձերբակալվել է 16.04.2015թ. ժամը 08.50-ից մինչև 09.05-ն ընկած ժամանակահատվածում: Ինչպես վերը նշվել է <<ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման>> գրանցամատյանի 7-րդ սյունակում նշվում է **ձերբակալման ամսաթիվը և ժամանակը** (այլ ոչ թե ՁՊՎ ընդունվելու ժամանակը), ինչը պատշաճ կերպով կատարվել է՝ նշելով ժամը 08.50-ը: Միաժամանակ նույն սյունակում նշվել է նաև ձերբակալված Մ.Սարոյանին բերման ենթարկելու՝ անձին փաստացի ազատությունից զրկելու ամսաթիվը և ժամը (16.04.2015թ. ժամը 08.30):

Հարկ է նշել, որ ներքին կանոնակարգի 7-րդ կետի համաձայն՝ ձերբակալվածներին ՁՊՎ ընդունելու հիմք է հանդիսանում Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով կազմված ձերբակալման արձանագրությունը կամ ձերբակալման մասին քրեական հետապնդման մարմնի որոշումը, իսկ 11-րդ կետի համաձայն՝ ոստիկանության տարածքային բաժինների հերթապահը ստուգում է ձերբակալվածներին ընդունելու և պահելու հիմքերը, ձերբակալվածներին ուղղված հարցերի միջոցով պարզում է ձերբակալման արձանագրության կամ որոշման մեջ նշված անձնագրային տվյալների իսկությունը, այնուհետև անձին ընդունում ՁՊՎ, այսինքն, ձերբակալվածին ՁՊՎ ընդունելիս անձը հաստատող փաստաթղթի առկայությունը պարտադիր չէ:

Միաժամանակ տեղեկացվում է, որ Մ.Սարոյանը գտնվել է հետախուզման մեջ և անձնագիր չի ունեցել: Հետագայում, ՁՊՎ-ում գտնվելու ընթացքում վարույթն իրականացնող մարմինը տրամադրել է Մ.Սարոյանի անձը հաստատելու մասին լուսանկարով տեղեկանք, որը դրվել է նրա անձնական գործում՝ ՔԿՀ տեղափոխելու համար: Այս պարագայում ևս որևէ խախտում թույլ չի տրվել:

ՀՀ ոստիկանության շտաբ